ներ, եւ դրա համար միաբանութիւնը մի քանի դասերի էր բաժանուած, որոնք հերթով փոխուում էին: Եւ այդպէս, աղօթքն ու պաշտամունքը եկեղեցում օր ու գիշեր մնում էր անխզելի եւ երբեք չէր ընդհատւում: Իսկ այն գիշերը, շաբաթոայ գիշեր լինելով, ամբողջ միաբանութիւնը «հսկում» էր կատարում, այսինքն՝ անքուն պիտի աղօթէր մինչեւ լոյս: Այդ կարգի աբեղաներին հին ժամանակներում յունական անունով կոչում էին «սպուդէ» (անխոնջ), իսկ նրանց վանքը՝ «Անհանգստից» վանք: Ի՞նչ հանգստութիւն էինք որոնում մենք «անհանգիստների» վանքում...

Առաւօտեան ժամը վերջանալուց յետոյ ես եւ Ասլանը գնացինք վանահօր աջը համբուրելու եւ նրան հրաժարական ողջոյն տալու: Նրան միայնակ գտանք իր անշուք խուցի մէջ նստած եւ ինչ-որ գրում էր: Նա թէեւ խիստ բարեսրտութեամբ ընդունեց մեզ, բայց մենք կարճ կտրեցինք եւ, ոտքի վրայ շնորհակալութիւն յայտնելով՝ դուրս եկանք:

Ուրիշ վանքերում միաբանները, իրանց այցելուներից նիւթական ակնկալութիւններ ունենալով, վերին աստիճանի քաղաքավարի եւ մինչեւ անգամ շողոքորթող են լինում: Բայց այդ, աշխարհից անջատուած, անընչասէր անապատականները ոչ միայն սառն էին վարւում, այլ խորշում էին մեղքի աշխարհի մարդիկներից: Այդ խորշանքը հասնում էր նրանց մէջ մինչեւ մարդատեցութեան: Իգական սեռին բոլորովին արգելուած էր այդ կղզին մտնել, իսկ արական սեռից մուտք են գործում հասակաւորները միայն:

Մենք վերջին անգամ հայեացք ձգեցինք «Անհանգստից» վանքի վրայ եւ հեռացանք:

— Ինչպէ՞ս երեւաց քեզ այդ վանքը, — հարցրի Ասլանից:

— Անապատական մոլեռանդութիւնը, ճգնաւորական կեանքը, — ասաց նա, — այլանդակեց մեր վանական կարգերը, որոնք, իրաւ, իրանց ժամանակին ունեցել են իրանց մէջ շատ մարդասիրական սկզբունքներ: Անապատականների շնորհիւ ինչպէս մեր վանական կեանքը այլանդակոեցաւ, այնպէս էլ այլանդակոեցաւ եւ հայկական գեղեցիկ ճարտարապետութիւնը, որ պահպանուած էր գլխաւորապէս վանքերի շինուածքների մէջ: Աղքատութիւն եւ անշքութիւն սիրելով, անապատականները բաւականացան անշուք խցիկներով եւ, խստակեցութեամբ սպանելով իրանց մարմինը, սպանեցին միեւնոյն ժամանակ եւ արհեստը: Նայեցէք, ինչ բանի են նման այդ ողորմելի շինուածքները, այդ տխո՛ւր անապատը...

Բերզէն-օղլուն՝ մեր հիւրընկալ աբեղայի հետ՝ գտանք ծովի ափի մօտ: Այնտեղ պատրաստ էր վանքի նաւակը, որ մեզ պիտի տանէր դէպի ցամա-